

Ջերմուկում աշխատանքն սկսեց Գյուղական համայնքների երկրորդ համաժողովը

05-ը հոկտեմբերի, 2012 թ.

http://mta.gov.am/hy/news/item/2012/10/05/news_1248/

Ջերմուկում այսօր աշխատանքն սկսեց Գյուղական համայնքների երկրորդ համաժողովը, որի նպատակը տեղական ինքնակառավարման համակարգի եւ գյուղական համայնքների ամենաարդիական խնդիրների քննարկումն է՝ ոլորտում ներգրավված բոլոր դերակատարների մասնակցությամբ: Համաժողովն անցկացվում է արդեն երկրորդ անգամ եւ հավակնում է դառնալ ամենամյա: Առաջին համաժողովն անցկացվել էր անցած տարի՝ Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում:



Համաժողովի լիազույժար նիստում բացման խոսքով հանդես եկավ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը՝ նշելով, որ համաժողովն արդեն դառնում է ավանդական ու եւս մեկ հնարավորություն է ընձեռում միասին քննարկել գյուղական համայնքների զարգացման հետ կապված խնդիրները: "Այս տարի համաժողովի օրակարգում ներառել ենք ՏԻ ոլորտի համար այն առաջնահերթ խնդիրները, որոնք կարելի էր վերաբերվում են նաեւ կառավարության կողմից", -ասաց փոխվարչապետը: Նա հաջողություններ մաղթեց մասնակիցներին՝ ակնկալելով նաեւ ակտիվ քննարկումներ թեմատիկ աշխատանքային խմբերում:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն իր ելույթում նշեց, որ երկխոսության նման ձեռնարկը կառավարությանը հնարավորություն է տալիս ճշգրտել առաջնահերթությունները՝ համայնքների եւ տարածքային համաչափ զարգացման հարցում, որը հռչակվել է կառավարության հինգ գերակա խնդիրներից մեկը: Տ. Սարգսյանը ընդգծեց, որ համաժողովի ընթացքում արված առաջարկությունները եւ հարցադրումները գտնվելու են ուշադրության կենտրոնում, եւ նախարարությունները հաշվի են առնելու դրանք՝ համապատասխան ծրագրեր մշակելիս:

Համաժողովի մասնակիցներին ողջունեց նաեւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) հայաստանյան գրասենյակի ղեկավար Քարեն Հիլիարդը՝ անդրադառնալով կազմակերպության կողմից տեղական ինքնակառավարման ոլորտում եւ համայնքներում իրականացվող ծրագրերին: Նա տեղեկացրեց, որ տեղական մակարդակում տնտեսական եւ քաղաքական զարգացմանն ուղղված նախաձեռնություններն առաջիկա հինգ տարիներին եւս ներառված կլինեն ՄԶԳ ծրագրերում: Գրասենյակի ղեկավարը նաեւ հայտնեց, որ ՄԶԳ-ն պատրաստվում է սկսել համայնքների, հատկապես՝ հեռավոր համայնքների զարգացմանն ուղղված նոր ծրագիր:

"Քաունթերփարթ ինթերնեշնլ" կազմակերպության հայաստանյան գրասենյակի ղեկավար Ալեքս Սարդարն իր ելույթում ծանոթացրեց "Քաղաքացիական հասարակության եւ տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի" շրջանակում կատարված աշխատանքներին եւ ներկայացրեց գյուղական համայնքների զարգացման վերաբերյալ իրենց մոտեցումները: Ըստ նրա՝ հարակից համայնքներում առկա ռեսուրսները միավորելը միակ ուղին է, որը հնարավորություն կտա համայնքներում ապահովել ամենակարելուր ծառայությունների մատուցումը:

Ելույթով հանդես եկավ նաեւ Շիրակի մարզի Ախուրիկ գյուղական համայնքի ղեկավար Վարդիթեր Գասպարյանը՝ խոսելով վերջին տարիներին համայնքում իրականացված աշխատանքների, համայնքի զարգացման ծրագրերի մասին: Լիազումար նիստից հետո կմեկնարկեն թեմատիկ վեց խմբերի աշխատանքները, որոնց ընթացքում կքննարկվեն տեղական ինքնակառավարման համակարգի ամենաարդիական խնդիրները՝ տեղական ժողովրդավարությունից մինչեւ համայնքներում հանրային ու մասնավոր հատվածի համագործակցություն:

Համաժողովին մասնակցում են պետական կառավարման մարմինների, համայնքների ու տեղական ինքնակառավարման համակարգի հետ աշխատող տարբեր միջազգային եւ տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Յուրաքանչյուր մարզ մասնակցում է մարզպետի գլխավորությամբ առանձին պատվիրակությամբ, որի կազմում ընդգրկված է տասը համայնքապետ:

Համաժողովն աշխատանքները կամփոփի հոկտեմբերի 6-ին:

ՏԿՆ հասարակայնության հետ կապերի բաժին

Պետրյուզեով նախապատվությունը տրվելու է տարածքային համաչափ
զարգացմանը. Տիգրան Սարգսյան

5-րդ հոկտեմբերի, 2012 թ.

<http://www.gov.am/am/news/item/9940/>

Վարչապետ Տիգրան Սարգսյանը Ջերմուկում մասնակցել է Գյուղական համայնքների երկրորդ համաժողովի բացմանը: Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ գործադիրի ղեկավարը նշել է, որ Հայաստանի կառավարության հինգ գերակա ուղղություններից մեկը տարածքների համաչափ զարգացումն է: «Առաջիկա տարիներին պետական բյուջեի միջոցները բաշխելիս նախապատվությունը տրվելու է տարածքների համաչափ զարգացմանը, քանի որ դրանց անհամաչափ զարգացվածությունը մի կողմից խոչընդոտում է Երևանի զարգացմանը, որովհետև գերկենտրոնացվածությունը ծանրաբեռնվածություն է ստեղծում, մյուս կողմից նպաստում է, որպեսզի մարզերում բնակվող քաղաքացիներն իրենց տարբեր՝ կրթական, մասնագիտական և այլ պահանջները բավարարելու համար ստիպված լինեն մեկնել մայրաքաղաք, ինչը սխալ է»,-

ասել

է

Տիգրան

Սարգսյանը:



Վարչապետը նշել է, որ Հայաստանի տարածքային կառավարման նախարարությունը մարզերն ու համայնքները համեմատության մեջ դիտարկելու նպատակով մշակել է մեթոդներ, որի շնորհիվ կառավարությունը կարողանում է ֆիքսել սոցիալապես խոցելի համայնքներն ու ֆինանսական օժանդակությունն առաջին հերթին ուղղել այդ համայնքներին:

Տիգրան Սարգսյանի ղիտարկմամբ՝ համայնքների զարգացման կարևորագույն ուղղություններից մեկն էլ ճանապարհաշինությունն է: «Նախընտրական այցերի ժամանակ հնարավորություն ունեցանք լսել համայնքների ղեկավարներին: Արձանագրեցինք, որ մեծամասնությունն առաջնային է համարում ճանապարհաշինությունը: Դա նշանակում է, որ մենք պարտավոր ենք լրացուցիչ ֆինանսներ ներդնել՝ միջհամայնքային ճանապարհների բարեկարգման ուղղությամբ, քանի որ այն ավելի բարենպաստ պայմաններ է ստեղծում մարդկանց գործունեության համար»,-

ասել է վարչապետը:

Կառավարության ղեկավարը կարևորել է նաև դպրոցաշինությունը: Վարչապետի տեղեկացմամբ՝ հանրապետության 1400 դպրոցներից 300-ը ներկայում կապիտալ վերանորոգման կարիք ունեն, իսկ պետությունը դեռևս կարողանում է տարեկան 59 դպրոցների վերականգնման ֆինանսներն ապահովել: Գործադիրի ղեկավարը տեղեկացրել է, որ Եվրամիության և Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ կազմակերպվելիք դոնորների համաժողովին ներկայացվելու է Հայաստանում բարեփոխումների և ենթակառուցվածքների զարգացման մեծ փաթեթ, այդ թվում դպրոցների վերականգնման ֆինանսական միջոցներ հայթայթելու նպատակով: Վարչապետի հավաստմամբ՝ բազմաթիվ այլ ենթակառուցվածքային խնդիրներ՝ ջրամատակարարման, գազիֆիկացման և այլն, ևս լինելու են գործադիրի ուշադրության կենտրոնում:

Տիգրան Սարգսյանը նշել է, որ Հայաստանի կառավարությունը շարունակելու է գյուղատնտեսության արդիականացման աշխատանքները: «Հանրապետության նախագահը երկու տարի առաջ խնդիր դրեց, որպեսզի պետությունը լուրջ օժանդակություն ցուցաբերի գյուղատնտեսությանը: Մենք մշակեցինք սերմնաբուծության ծրագիր, և դա արդեն իսկ տվել է իր դրական ազդեցությունը. ներմուծված էլիտար սերմերը հնարավորություն տվեցին էապես բարձրացնել սերմնաբատադրությունը»,-

ասել է վարչապետը:

Կառավարության ղեկավարը հիշեցրել է, որ պետությունը գյուղացիների համար սուբսիդավորում է պարարտանյութի և դիզվառելիքի սակագները: Նշելով, որ Վանաձորի քիմիական կոմբինատում աշխատանքներ են տարվում պարարտանյութի արտադրության զարգացման ուղղությամբ՝ Տիգրան Սարգսյանը հույս է հայտնել, որ կոմբինատը կկարողանա այնպիսի ծավալների պարարտանյութ արտադրել, որպեսզի 2013 թվականին ամբողջությամբ բավարարվի գյուղացիական բոլոր տնտեսությունների պահանջարկը:

«Գյուղատնտեսության արդիականացումը ենթադրում է ժամանակակից արտադրողականություն, նոր տեխնիկայի և մեթոդների կիրառում: Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ հանրապետության 50 համայնքներում սկսել ենք կոռպորատիվների ձևավորման աշխատանքները, որի շրջանակում պետությունը նոր գյուղտեխնիկա է տրամադրում վերջիններիս: Հայտ ենք ներկայացրել Համաշխարհային բանկին, որպեսզի այս ծրագրին մասնակից համայնքների թիվը հաջորդ տարի կրկնապատկվի»,-

նշել է կառավարության ղեկավարը:

Վարչապետը տեղեկացրել է նաև, որ 2013 թվականի պետական բյուջեով գյուղացիական տնտեսություններին տրամադրվելիք արտոնյալ վարկերի նպատակով ուղղվելու է 7,5 մլրդ դրամ, իսկ վարկային տոկոսները կսուբսիդավորվեն պետության կողմից: Հոկտեմբերի 5-6-ը Ջերմուկում անցկացվող Գյուղական համայնքների երկրորդ

համաժողովի ընթացքում կքննարկվեն տեղական ինքնակառավարման ոլորտի արդի հիմնախնդիրներն ու գյուղական համայնքների կայուն զարգացմանն առնչվող հարցեր: Համաժողովին մասնակցում են պետական կառավարման մարմինների, համայնքների, տեղական ինքնակառավարման համակարգի հետ աշխատող տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ և փորձագետներ: Յուրաքանչյուր մարզ համաժողովին մասնակցում է մարզպետի գլխավորությամբ առանձին պատվիրակությամբ, որի կազմում ընդգրկված կլինեն տասը համայնքապետեր:

ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

Նախագահ Սերժ Սարգսյանը Ջերմուկում մասնակցել է Գյուղական համայնքների 2-րդ համաժողովի ամփոփիչ լիագումար նիստին

6-ր հոկտեմբերի, 2012 թ.

<http://www.president.am/hy/press-release/item/2012/10/06/President-Serzh-Sargsyan-Jermuk-conference-of-rural-communities/>

Նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով մեկնել է Վայոց Ձորի մարզ: Հանրապետության ղեկավարն այսօր առավոտյան Ջերմուկ քաղաքում մասնակցել է Գյուղական համայնքների 2-րդ համաժողովի ամփոփիչ լիագումար նիստին:



Համաժողովին մասնակցել են հանրապետության գյուղական համայնքների ղեկավարներ՝ հանրապետության բոլոր մարզերից: Միջոցառումը նպատակ ունի տեղական ինքնակառավարման համակարգի և գյուղական համայնքների ամենաարդիական խնդիրների քննարկման, փորձի փոխանակման, իրականացվող ծրագրերի և քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը:

Նախագահը ողջունել է միջոցառման մասնակիցներին և համաժողովին մաղթել արդյունավետ աշխատանք:

«Կայացած տեղական ինքնակառավարման համակարգի կարևորության մասին մենք շատ ենք խոսել: Իրականացվող պետական քաղաքականությունն էլ դրան է ուղղված. մենք շարունակելու ենք տեղերում կայացող որոշումների համար ավելի լայն ազատություններ ու հնարավորություններ ընձեռելու մեր ռազմավարությունը: Եվ շարունակելու ենք պետական բյուջեից օժանդակել նման ծրագրերը:

Սա մեկ կողմից: Մյուս կողմից կա շատ կարևոր մի հանգամանք, որը բոլորս պետք է կարևորեք: Խոսքս մեր դերակատարման, մեր վարքի ու մարդկանց կողքին կանգնելու մեր ունակությունների մասին է: Բացատրեմ միտքս:

Այսօր ունենք մի իրականություն, երբ մեր տնտեսական ցուցանիշներն սկսել են լրջորեն բարելավվել, նկատելի ձեռքբերումներ ենք արձանագրել ընտրական գործընթացներում, բավականաչափ ամուր դիրքեր ունենք սահմանների պաշտպանության և միջազգային ասպարեզում Հայաստանի դերի ավելացման հարցերում, բայց դեռևս չունենք այնպիսի հասարակական միջավայր, երբ բոլորը կամ գոնե ճնշող մեծամասնությունը հավատում են հաջողությանը և սատար են կանգնում փոփոխությունների միտված մեր նախաձեռնություններին: Մարդիկ դժգոհ են, մարդիկ դեռևս հիասթափված են:

Դժգոհություններն առավելապես սոցիալ-տնտեսական բնույթի են, համապետական և տեղական իշխանությունների գործունեությունից են, հեռանկարի և հույսի պակասից են, տարբեր մակարդակների առաջնորդների հանդեպ հավատի կորստից են:

Հասարակական հոռետեսական միջավայրը ներկայում, ըստ էության, մեր երկրի առջև ծառայած ամենաառաջնային խնդիրներից է, որը լուրջ խոչընդոտ է թե՛ զարգացման, թե՛ փոփոխությունների ճանապարհին: Մենք փոխելու ենք, իհարկե, այս իրավիճակը, մեր յուրաքանչյուր քաղաքացի տեսնելու և հավատալու է, որ ճանապարհը, որով գնում է Հայաստանը միակ անխոցելի և հեռուն տանող ճանապարհն է: Բայց պետք է արդյունքներ տեսնեն մարդիկ, պետք է վստահ լինեն, որ բոլոր իրականացվող գործողություններն այդ նպատակին են ծառայում: Մարդիկ պետք է հավատան, ուղղակի հավատան:

Դուք, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներդ, մեր հասարակության հետ շփման առաջնային օղակն եք: Ձեր յուրաքանչյուր ամբարտավան քայլ, անպատասխանատու արարք կամ անարդար որոշում միանգամից դառնում է հավատի կորուստ երկրի ու նրա ընթացքի վերաբերյալ: Ամեն օր իր քայլերով հույս արթնացնող առաջնորդների դեֆիցիտ է առաջացել հանրային ընկալման մեջ: Մենք սա պետք է հասկանանք: Դուք եք նաև այն մարդիկ, որ պետք է այդպիսի առաջնորդներ լինեք:

Մեր քաղաքացիները ձեզ հետ ամենօրյա շփման մեջ են, ձեր գործողությունների հետևանքով կորսված հավատը հանրապետական մակարդակով շատ դժվար կլինի վերականգնել: Երբ ասում եմ ձեզ, հարգելի գործընկերներ, բնականաբար, ես նկատի չունեմ այստեղ նստած մարդկանց, ես նկատի ունեմ ընդհանրապես տարբեր մակարդակներում ընտրված առաջնորդներին: Մեզնից յուրաքանչյուրը՝ գրեթե նույնանման աշխատանք է կատարում: Մեկի ծավալները մեծ են, մյուսինը՝ մի քիչ ավելի փոքր: Եվ մեզնից որևէ մեկին ոչ ոք չի պարտադրել գալ, առաջադրվել, ընտրվել: Եթե մենք եկել ենք, առաջադրվել ենք, ընտրվել ենք, նշանակում է, որ մենք պետք է պատրաստ լինենք ծառայելու այն մարդկանց, ովքեր մեզ ընտրել են: Մենք պետք է կարողանանք անել այնպես, որպեսզի մարդիկ չփոշմանեն մեզ վստահելու ու քվեարկելու համար: Սրանք շատ կարևոր դիտարկումներ են, խնդրում եմ ամեն օր սա հիշել: Հիշե՛ք ու աշխատանքի գնալուց առաջ մտածեք ոչ միայն այն մասին, թե ինչ եք անելու, այլ թե ինչպես եք անելու: Ձեր առաքելությունը միայն կուտակված խնդիրները լուծելը չէ, այլ այնպես լուծելը, որ մարդիկ դրանով բավարարված լինեն: Հիշե՛ք, մենք խաներ չենք, որպեսզի խոժոռ դեմքով մարդկանց հարցերը լուծենք ու հետո էլ սպասենք, որ այդ մարդիկ մեզնից շնորհակալ լինեն: Չփորձեք երբեք ընկնել նման խաբկանքների ծուղակը. դա վտանգավոր ճանապարհ է:

Մենք փոփոխությունների մեծ ուղի ենք մտել: Մեր ծրագրերը կհաջողվեն միայն, եթե ողջ հասարակությունը հավատա դրանց ու սատար կանգնի: Հիշե՛ք, որ ձեր խնդիրների շարքում այս ամենը ևս կա և պակաս կարևորների մեջ չէ:

Այսքանն էի, ուղղակի, ուզում ձեզ ասել: Բնականաբար, ես կարող էի մի քիչ այլ երանգներ հաղորդել իմ կարճ ելույթին, ասել, թե ինչպիսի մեծ հաջողությունների ենք հասել, բերել լավ օրինակներ: Փայլուն օրինակներ ունենք՝ երբ մարդիկ նվիրված են երկրին, իրենց աշխատանքին, անում են ամեն ինչ, որպեսզի կարողանան արդարացնել այն մեծ վստահությունը, որ իրենց նկատմամբ ցուցաբերվել է: Բայց կարծում եմ, որ սա մեզ յուրահատուկ չէ: Այն, ինչ մենք արել ենք, որևէ մեկը մեզնից չի խլելու և շատ դեպքերում էլ կարող է մոռացվել: Մենք պետք է խոսենք այն խնդիրների մասին, որոնք խոչընդոտում են ավելի լավ համայնք, ավելի լավ քաղաք կամ մարզ և, վերջին հաշվով, ավելի լավ պետություն ունենալուն: Իսկ այդպիսի խոչընդոտները բազմաթիվ են: Եվ ինչքան շատ խոսենք խնդիրների մասին, այնքան տեսնելու ենք դրանց լուծման ճանապարհները և այնքան մարդիկ հավատալու են: Իսկ եթե չհավատացին, մեզնից ոչ մեկը չի կարող լիաթոք ապրել, չի կարող կառավարել ոչ հարյուր հոգանոց, ոչ հազար հոգանոց, ոչ էլ տաս հազար հոգանոց համայնքներ: Իսկ կառավարել, մեկ անգամ ևս կրկնում եմ, նշանակում է ծառայել գաղափարին: Եվ ես

վստահ եմ, որ գոնե այս դահլիճում նստած մարդկանց ճնշող մեծամասնությունը հենց ծառայում է այդ գաղափարին: Շնորհակալ եմ և ցանկանում եմ, որ ձեզնից յուրաքանչյուրը, մենք բոլորս, բոլոր փորձություններից դուրս գանք պատվով», -ասել է Սերժ Սարգսյանը:

Նախագահի աշխատանքային այցը Վայոց Ձորի մարզ շարունակվում է: Հանրապետության ղեկավարը կայցելի նաև Արենի և սահմանամերձ Խաչիկ համայնքներ:

ՀՀ Նախագահի մամուլի գրասենյակ